



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն**

ք.Երևան

«10» 02 2022թ № 210-Նհ

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ԾՐԱԳԻՐԸ, 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ
ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի
դեկտեմբերի 30-ի N2121-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությունը և
ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N658-Լ որոշման հավելվածի 11-
րդ կետի 17-րդ ենթակետով և 18-րդ կետի 21-րդ ենթակետով

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հաստատել՝

- 1) «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2022 թվականի ծրագիրը՝ համաձայն
N 1 հավելվածի.
- 2) «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2022 թվականի ծրագրի
իրականացման միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի.
- 3) «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2022 թվականի ծրագրի
իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝

Նախարարություն) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալ Անահիտ Խեչոյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը նախարարության պաշտոնական կայքէջում:

3. Նախարարության գրոսաշրջության կոմիտեի գրոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ Սուսաննա Ասիզադյանին հրամանը հաստատվելուց հետո՝

1) ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

2) 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ սահմանված կարգով ապահովել 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով կազմակերպության ընտրության մրցութային հանձնաժողովի ստեղծումը:



Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ


1. Միավորված ազգերի կազմակերպության զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ ԶՀԿ) վիճակագրական տվյալների համաձայն՝
 - 2019 թվականին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների թիվը 2018 թվականի համեմատ աճել է 4 տոկոսով՝ հասնելով մոտ 1,5 մլրդի,
 - վերջին հինգ տարիներին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է շուրջ 4.5 տոկոս
 - միջազգային զբոսաշրջությունը 2021 թվականի յոթ ամիսների ընթացքում գրանցել է համեստ բարելավում՝ պայմանավորված պատվաստումների թվաքանակով և հիմնված է բազմաթիվ ուղղությունների վերաբացման հետ, հիմնականում Եվրոպայում և Ամերիկայում:
 - միջազգային զբոսաշրջային ժամանումները 2021 թվականի առաջին յոթ ամիսներին 40%-ով ցածր են 2020 թվականի, և դեռ 80%-ով ցածր են համեմատած 2019 թվականի նախահամաճարակային տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:
 - միաժամանակ վիճակագրական տվյալները փաստում են, որ Կարիբյան ավազանի, Աֆրիկայի, Ասիայի և Խաղաղ օվկիանոսի փոքր կղզիները, ինչպես նաև Եվրոպական մի քանի փոքր ուղղություններ արձանագրել են լավագույն ցուցանիշները 2021 թվականի հունվար-հուլիս ամիսներին, որոնց ժամանումները մոտ են եղել կամ երբեմն գերազանցել են մինչև համաճարակային մակարդակը:
 - զբոսաշրջության համաշխարհային շուկայում հուլիս ամսին (-67%) համեմատաբար ավելի լավ արդյունքներ են գրանցել, քան հունիսին (-77%), ինչը մինչև այժմ լավագույն ամիսն է 2020 թվականի ապրիլից ի վեր:

Չնայած 2020 թվականի ցածր մակարդակների համեմատ հարաբերական բարելավմանը, միջազգային զբոսաշրջության ցուցանիշները զգալիորեն ցածր են 2019 թվականի մակարդակից:

Փորձագետները կանխատեսում են ոլորտի վերականգնում 2022 թվականին՝ պայմանավորված սահմանափակումներից հետո առաջացած պահանջարկով՝ հիմնականում երկրորդ և երրորդ եռամսյակների ընթացքում: Միևնույն ժամանակ փորձագետների


մեծամասնության կարծիքով միջազգային ժամանումների վերադարձ 2019 թվականի մակարդակին կհասնի 2024 թվականին կամ ավելի ուշ:

2. Հայաստանում համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների` 2019 թվականին զբոսաշրջային այցելությունները կազմել են 1.894.377, ինչը 2018 թվականի համեմատ աճել է 14.7 %-ով, կազմելով 1.651.782 այցելություն:



Համաձայն ՍԷԿՏ-ի տվյալների` 2019 թվականին ընդհանուր այցելությունների մեջ բացարձակ թվով աճ ապահոված 5 երկրներն են ՌԴ-ն, Վրաստանը, Իրանը, ԱՄՆ-ն և Ղազախստանը: Սակայն այցելությունները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են Ֆիլիպիններից, Արաբական Միացյալ Էմիրություններից, Սիրիայից: Տոկոսային առումով 2019 թվականին կտրուկ աճ են գրանցել ժամանումները Դանիայից, Թաիլանդից, Չինաստանից, Սինգապուրից, Ղազախստանից, Ղրղստանից:

2021 թվականի 11 ամիսների ժամանումները փաստում են, որ առաջատարն են շարունակում մնալ ՌԴ-ն, Իրանը և Վրաստանը:



3. Հիմք ընդունելով 2013 թվականին իրականացված զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության տվյալները` փորձագիտական գնահատականներով 2019

թվականին ներգնա զբոսաշրջությունից ստացված համախառն եկամուտը կազմել է շուրջ 1500 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (մեկ ներգնա զբոսաշրջիկի կատարած միջին ծախսը մեկ այցելության ընթացքում գնահատվում է շուրջ 800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ):

4. 2019 թվականին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1 544 600 նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 41.4 %-ով: Ներքին զբոսաշրջության աճին նպաստում է նաև սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայությունը, թեկուզև այն կազմում է ներքին զբոսաշրջային այցելությունների ընդամենը 10-15%-ը:

2019 թվականին ներքին զբոսաշրջությունից ստացված համախառն եկամուտը փորձագիտական գնահատականներով կազմել է շուրջ 353 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (մեկ ներքին զբոսաշրջիկի կատարած միջին ծախսը մեկ այցելության ընթացքում գնահատվում է շուրջ 250 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ):

2021 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1 435 111, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 53,5 %-ով, որը կազմել էր 934 981 այցելություն:

5. Ներկայումս ՀՀ տարածքում գործում են ավելի քան 650 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ (հյուրանոց, մոթել, հյուրանոցատիպ հանգրվան, առողջարան, պանսիոն, հանգստյան կամ մասնագիտացված տուն, զբոսաշրջային բնակատեղի (hostel), զբոսաշրջային տուն, ճամբար), որոնց համարների և ննջատեղերի ընդհանուր քանակը կազմում է համապատասխանաբար ավելի քան 15000 և 30000: Նշված հյուրանոցային տնտեսության օբյեկտներից մոտ 35%-ը գտնվում է Երևանում, մոտ 65%--ը՝ ՀՀ մարզերում:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Զբոսաշրջության զարգացումը նպաստում է ազգային եկամտի ավելացմանը, համաչափ տարածքային զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Ծրագիրն ուղղված է զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության իրականացմանը.

- Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացմանը և թիրախավորված զբոսաշրջային շուկաներում առավել ակտիվ մարքեթինգային քաղաքականության իրականացմանը,
- Հայաստանի համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, տեղական ավանդույթների վերականգնմանը, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորմանը և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացմանը
- Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական և տեղեկատվական համակարգի կատարելագործմանը:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Ծրագրի նպատակն է նպաստել.

- 1) Հայաստանի այցելուների թվի ավելացմանը և ներքին զբոսաշրջության խթանմանը
- 2) Հայաստանում զբոսաշրջիկների գտնվելու ժամանակահատվածի երկարաձգմանը և ծախսի հնարավորությունների ընդլայնմանը
- 3) Ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը
- 4) համաշխարհային զբոսաշրջային քարտեզում Հայաստանի դիրքի բարելավմանը
- 5) զբոսաշրջության ոլորտի կրթության և մասնագիտական որակավորման համակարգի ամրապնդմանը

6) միջազգային համագործակցության ամրապնդմանը և շարունակական ակտիվացմանը:

8. Ծրագրի խնդիրներն են.

- 1) համաշխարհային շուկայում Հայաստանի նկարագրի՝ որպես կայուն, ապահով և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկրի ամրապնդում, զարգացում և խթանում,
- 2) նոր, մրցունակ արդյունքի ձևավորում, Հայաստանի ամբողջ տարածքում ավանդույթների և ծիսակատարությունների, մշակութային և բնական ժառանգության պահպանմանը և վերականգնմանը աջակցում, և Հայաստանի մարզերում զբոսաշրջավայրերի զարգացում,
- 3) զբոսաշրջության ոլորտում որակի համակարգի կատարելագործմանն ուղղված ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում,
- 4) միջազգային, տարածաշրջանային և այլ կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության ապահովում, այլ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացում:
- 5) վիճակագրական տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմի ստեղծում:

IV. ԱՎՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

9. Ծրագրի իրականացումն ուղղված է Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության և մրցունակության մակարդակի բարձրացմանը: Համաշխարհային շուկայում Հայաստանի, որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկրի ամրապնդված նկարագրի՝ Համաշխարհային շուկայում բարելավելով Հայաստանի վարկանիշը:

Ակնկալվող արդյունքներն են՝

- 1) միջազգային զբոսաշրջիկների թվի ավելացում՝ տարեկան մինչև 10%-ի չափով
 - 2) մարքեթինգային քաղաքականության իրականացման շրջանակներում միջազգային զբոսաշրջային շուկայի և զբոսաշրջության զարգացման միտումների վերլուծության արդյունքում նոր թիրախային շուկաների ընտրություն և ակտիվ մարքեթինգային միջոցառումների կազմակերպում, այդ թվում.
- մասնակցություն առնվազն երեք ճանաչված զբոսաշրջային ցուցահանդեսների:
- Զբոսաշրջության կոմիտեի կողմից միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների մասնակցության ընտրությունը՝ կիրառելով միջազգային փորձը կատարվում է հիմնվելով թիրախային երկրներում մարքեթինգային գործողությունների, սոցիալական հարթակներում մասնավոր հատվածի շրջանում հարցման, ինչպես նաև **Անկախ Պետությունների Համագործակցության անդամ երկրներում, Պարսից ծոցի արաբական և Եվրոպական միության անդամ պետություններում անցկացվելիք ամենախոշոր**
- առնվազն երեք հեղինակավոր ճամփորդական պարբերականներում Հայաստանի և հայկական զբոսաշրջային առաջարկի վերաբերյալ գովազդային և տեղեկատվական հոդվածների տպագրում, այդ թվում
- **34Travel առցանց ճամփորդական պարբերականում** (իրավաբանական անվանումը՝ **ԱԶ Կաշլիկով Անտոն** (Физическое лицо-предприниматель Кашликов Антон),
 - **АК Россия** ավիաընկերության պատկանող ամսագրում (իրավաբանական անվանումը՝ **ООО Аэропресс**),
 - ԱՄԷ-ի հայտնի պարբերականում՝ **Gulf Business/Business Traveller** (մեդիա հոլդինգի իրավաբանական անվանումը՝ **Motivate Media Group**)

Զբոսաշրջության կոմիտեն միջազգային պարբերականներ ընտրելիս առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- պարբերականը պետք է ունենա ճամփորդական ուղղվածություն, թիրախավորի անհատ զբոսաշրջիկների, հանդիսանա ոլորտային առցանց հարթակ, որը տեղեկություններ է տրամադրում զբոսաշրջիկներին ճամփորդական ուղղությունների վերաբերյալ,
 - պարբերականը պետք է ներկայացված լինի բոլոր հայտնի սոցիալական հարթակներում, ունենա օգտատերերի (ճամփորդողների) շտեմարան, որոնց պարբերաբար ուղարկվում է անհատական ծանուցումներ,
 - տպագիր ճամփորդական պարբերականի դեպքում, այն պարտադիր պետք է ունենա նաև առցանց հարթակ/կայք, որտեղ տեղ կգտնեն և կտարածվեն պատվիրված հոդվածները նույնպես:
- առնվազն տաս հազար հատ Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիությանն ուղղված գովազդատեղեկատվական կյուբերի ստեղծում և տրամադրում երկրի գրավչությունները ներկայացնող միջոցառումների շրջանակներում, վիճակագրական տվյալների հավաքագրում,
- 3) առնվազն հինգ դիվերսիֆիկացված և մրցունակ զբոսաշրջային առաջարկներ՝ ՀՀ մարզերի ներգրավմամբ փառատոների անցկացմանն աջակցություն,
- 4) ենթակառուցվածքների և ծառայությունների որակի բարելավմանն ուղղված **աջակցություն**՝
- տարեկան առնվազն 5 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը,
 - զբոսաշրջային ծառայություններ մատուցողների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը,
- 5) զբոսաշրջության ոլորտում ընդլայնված և ակտիվացած միջազգային համագործակցություն, այդ թվում աջակցություն մեկ մշակութային միջազգային միջոցառմանը՝ **BALTIC CENTRE FOR CULTURAL MANAGEMENT** կազմակերպությանը աշխարհահռչակ London Community Gospel Choir երգչախմբի համերգի կազմակերպման համար:

V. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԸ

10. Զբոսաշրջության զարգացման 2022 թվականի ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեն է՝ 200.0 միլիոն դրամի չափով, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներ (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ):

11. Հավելված 2-ով նախատեսված միջոցառումներն իրականացվում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N2121-Ն որոշման 11-ին կետի 1) ենթակետի «գ.» մասի համաձայն՝ մրցույթային կարգով, բացառությամբ Հավելված 2-ի 1.1, 1.2 և 4.1.3 միջոցառումների՝ օտարերկրյա կազմակերպություններին անմիջական փոխանցմամբ:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՉԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Վերստուգելի չափանիշը	Կատարողը (համա-կատարողները)	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
1. ՉԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ						
1.1	Մասնակցություն միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում ու խթանում, հայկական և օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների միջև գործարար կապերի հաստատում, ցուցահանդեսներին պատշաճ մասնակցություն	Առնվազն 3 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցություն	Չբոսաշրջության կոմիտե (Միջազգային ցուցահանդես կազմակերպող արտերկրյա կազմակերպություն)	2022թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
1.2	Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում	Միջազգային հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդային հոդվածներ՝ սոցիալական հարթակներում տարածելու և հարթակների ներգրավվածությունը բարձրացնելու համար	Առնվազն 3 հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածներ (ըստ Չբոսաշրջության կոմիտեի պատվերի)	Չբոսաշրջության կոմիտե (Օտարերկրյա հեղինակավոր պարբերականներ ներկայացնող արտերկրյա կազմակերպություններ)	2022 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
1.3	Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն և տպագրություն	1.3.1 Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացման և խթանման նպատակով գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն՝ տարբեր	Առնվազն 10 000 հատ գովազդատեղեկատվական նյութեր (Չբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան)	Չբոսաշրջության կոմիտե	2022թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		լեզուներով և բովանդակությամբ և տպագրություն				
		1.3.2 Չբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի սպասարկում Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի օգտագործմամբ զբոսաշրջության ոլորտի վիճակագրական տվյալների հավաքագրում	Գործող համակարգչային ծրագրի սպասարկում Չբոսաշրջային այցելությունների քանակի, զբոսաշրջիկների սեռի, տարիքի, քաղաքացիության վերաբերյալ վիճակագրական տվյալների ստացում	Չբոսաշրջության կոմիտե	2022թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՉԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԵԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ

2.1	Պետական աջակցություն ՀՀ մարզերում փառատոների կազմակերպմանը	Համայնքներում զբոսաշրջության և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը նպաստում, Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում՝ տեղական ավանդույթների ու մշակույթի վերականգնում, հյուրընկալող և շրջակա համայնքներում տնտեսական և մարդկային ներուժի բացահայտում ու զարգացում	Առնվազն 5 փառատոների կազմակերպմանը պետական աջակցություն	Չբոսաշրջության կոմիտե	2022թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
-----	--	--	---	-----------------------	------------------	---

3. ԵՆԹԱԿԱՈՒՐՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ

3.1	Պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների փաստական համակարգի ձևավորում տեղեկատվական և մասնագիտական տեղեկատվության տրամադրում, գովազդատեղեկատվական	ՀՀ մարզերում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների միասնական համակարգի ձևավորում տեղեկատվական և մասնագիտական տեղեկատվության տրամադրում, գովազդատեղեկատվական	ՀՀ մարզերում առնվազն 5 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը պետական աջակցություն, մեկ միջոցառման կազմակերպում	Չբոսաշրջության կոմիտե	2022թ. ընթացքում.	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
-----	--	---	--	-----------------------	-------------------	---

		Նյութերի տարածում, մեկ միջոցառման կազմակերպում				
3.2	Չբուսաշրջության ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացման դասընթացներ	մասնագիտացված դասընթացների ծրագրի կազմում, ուսուցման և վերապատրաստման գործընթացի կազմակերպման ապահովում	Չբուսաշրջային ծառայություններ մատուցողների համար առնվազն 3 դասընթացների կազմակերպում	Չբուսաշրջության կոմիտե	2022 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4. Միջազգային համագործակցություն						
4.1	Միջազգային համագործակցության ապահովում՝ միջոցառումների կազմակերպում	4.1.1 Միջազգային համագործակցության ամրապնդում և ակտիվացում, միջազգային տարածաշրջանային համագործակցության շրջանակներում միջոցառումների կազմակերպում	Հայաստանում ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային Խորհրդի 67-րդ նիստի կազմակերպում	Չբուսաշրջության կոմիտե	2022թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե
		4.1.2 Չբուսաշրջության ոլորտում համագործակցության երկկողմ և բազմակողմ իրավապայմանագրային պարտավորությունների կատարում,	Հայաստանը անդամակցող միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին մասնակցություն, Երկկողմ և բազմակողմ իրավապայմանագրային պարտավորությունների կատարում	Չբուսաշրջության կոմիտե	2022թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

		4.1.3 արտերկրյա կազմակերպության միջոցով համաշխարհային համբավ վայելող մշակութային միջոցառմանը աջակցություն, Հայաստանի վարկանիշային առաջխաղացում, մշակութային զբոսաշրջության խթանում	Աջակցություն մեկ մշակութային միջազգային միջոցառմանը	Զբոսաշրջության կոմիտե (օտարերկրյա կազմակերպության միջոցով միջազգային արտերկրյա մշակութային միջոցառում իրականացնող կազմակերպություն)	2022թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
--	--	--	---	--	------------------	--

		2022 թվական	"Հավելված 3 ՀՀ Էկոնոմիկայի նախարարի հունվարի N -Ա հրամանի
ԾԱՌՍԵՐԻ ՆԱԽԱՅԱՀԻՎ			
«ԱՆՎՃԱՐՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՆՈՒԹՅԱՆ ԶԳՐԱԳՅՈՒՄ»			
2021 ՉԱՄԿԱՆ ԾՈՒՍՈՒՄ ԵՎ ՉԱՄԿԱՆԻՄԱՆ ՄԵՑՈՑԱԾՈՒՄԵՐՈՒՄ			
h/h	ԾԱՌՍԱՅՈՒՄՆԵՐ ՄԻՋՈՑԱԾՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2022թ. ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները (հազար դրամ)	
1	ԶԲՈՍԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԵՎ ԽՈՍՏԱՆՈՒՄԻ ԳՈՐԾԵՆՈՒՄ	109200.0	
1.1	Մասնակցություն միջազգային հեղինակավոր առնվազն 3 զբոսաշրջային ցուցահանդեսներին	81000.0	
1.2	Հեղինակավոր առնվազն 3 պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում	15000.0	
1.3	Գովազդատեղեկատվական նյութեր	13200.0	
13.1	Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն և տպագրություն առնվազն 10000 հատ	12000.0	
1.3.2	Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի սպասարկում	1200.0	
2	ՀԱՅԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԽՈՍՏԱՆՈՒՄ	15000.0	
2.1	Պետական աջակցություն ՀՀ մարզերում առնվազն 5 փառատոների կազմակերպմանը	15000.0	
3	ԵՆՈՒՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	14500.0	
3.1	Պետական աջակցություն զբոսաշրջային առնվազն 5 տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովմանը	10000.0	
3.2	Զբոսաշրջության ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացման առնվազն 3 դասընթացների կազմակերպում	4500.0	
4	Միջազգային համագործակցություն	27960.0	
4.1.1	միջազգային առնվազն 1 միջոցառումն կազմակերպում	20800.0	

4.1.2	գրոսաշրջության ոլորտում համագործակցության երկկողմ և բազմակողմ իրավապայմանագրային պարտավորությունների կատարում	2160.0
4.1.3	արտերկրյա կազմակերպության միջոցով համաշխարհային համբավ վայելող մշակութային միջոցառմանը աջակցություն	5000.0
	Ընդամենը	166660.0
	ԱՄՔ	33340.0
	Ընդամենը	200000.0